

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ----- 2021թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
Հ.ՍՈՒՐԱՂՅԱՆ ՓՈՂ. 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ 1/3 ԲԱԺՆԵՄԱՍՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.315-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Հ. Սուրադյան փողոցի 9 հասցեի բնակելի տան 1/3 բաժնեմասը (անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման հ. 19082020-01-0425, գաղտնաբառ՝ IZAKF5QYHATN վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ռոզա Գուրգենի Ավետիսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՍՈՒՐԱՂՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ. ՄՈՒՐԱՂՅԱՆ ՓՈՂ. 9 ՏԱՆ 1/3 ԲԱԺՆԵՄԱՄՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Արաբկիր վարչական շրջանի Հ. Մուրադյան փող. 9 տան 1/3 բաժնեմասը սեփականության իրավունքով օտարել /նվիրել/ Ռոզա Գուրգենի Ավետիսյանին: Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.19082020-01-0425 (գաղտնաբառ՝ IZAKF5QYHATN) վկայականի՝ նշված հասցեի բնակելի տան 1/3 բաժնեմասը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևանի քաղաքի Հ. Մուրադյան հ.9 բնակելի տունն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանել է Ռոզա Ավետիսյանի ամուսնուն՝ Կնյազ Ավետիսյանին (2/3) և ամուսնու խորթ մորը՝ Արծվիկ Ավետիսյանին (1/3): Արծվիկ Ավետիսյանն ու Կնյազ Ավետիսյանը մահացել են: Կնյազ Ավետիսյանի բաժնեմասի նկատմամբ ժառանգ է հանդիսացել Ռոզա Ավետիսյանը (ժառանգության իրավունքի հ.8841 վկայագիր): Արծվիկ Ավետիսյանի բաժնեմասի նկատմամբ ժառանգություն չի բացվել: Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի 1-ին մասի՝ եթե չկան ոչ ըստ կտակի և ոչ էլ ըստ օրենքի ժառանգներ, կամ նրանք հրաժարվել կամ մեկուսացվել են ժառանգությունից, ապա ժառանգվող գույքը ճանաչվում է անժառանգ, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ անժառանգ գույքը դառնում է ժառանգության բացման վայրի համայնքի սեփականություն:

Հաշվի առնելով 2020թ. հուլիսի 22-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.7631 վկայագիրը՝ քննարկվող բնակելի տան 1/3 բաժնեմասի նկատմամբ գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը:

Այժմ, Ռոզա Ավետիսյանը ցանկանում է՝ սեփականության իրավունքով Երևան համայնքին պատկանող Հ.Մուրադյան փող. 9 տան 1/3 բաժնեմասը նվիրատվության կարգով օտարել իրեն, քանի որ տունը տարիներ շարունակ տիրապետվում է իր կողմից, և

ինքն է իրականացնում տարածքի սպասարկման ծառայության դիմաց կոմունալ բոլոր վճարումները:

Համաձայն թիվ 17 տեղամասի լիազոր ներկայացուցչի և ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Արաբկիրի անձնագրային բաժանմունքի կողմից տրված տեղեկանքների՝ Ռոզա Ավետիսյանը քննարկվող հասցեում բնակվում և հաշվառված է 1964 թվականից:

Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի: Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ. ՄՈՒՐԱՂՅԱՆ ՓՈՂ. 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ 1/3 ԲԱԺՆԵՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Հ. Մուրադյան փող. 9 հասցեի բնակելի տան 1/3 բաժնեմասը անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ. ՄՈՒՐԱՂՅԱՆ ՓՈՂ. 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ 1/3 ԲԱԺՆԵՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Հ. Մուրադյան փող. 9 հասցեի բնակելի տան 1/3 բաժնեմասն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ